ԴԱՐՁՅԱԼ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Լ. Փ. Շահինյանը հարկ է համարել մանրամասնորեն անդրադառնալ նրա հոդվածների կապակցությամբ մեր արած առարկություններին (Գ. Խ. Սարգսյան, Խորենացու «Պատմության» ժամանակագրական համակարգի վերականգնման մասին, ՊԲՀ, 1968, № 1), բայց չնայած նրա սույն հոդվածի մեծ ծավալին, մեր վեճը դոփում է տեղում, առաջ չի շարժվում։

Հուսալի. Լ. Շահինյանը այդպես էլ պատասխան չի գտնում մեր հարցադրմանը՝ Խորենացու ժամանակագրության սկզբնատարու վերաբերյալ։ Հարցադրումը հետևյալն է. Խորենացին Ալեքսանդր Մակեդոնացու մահը և Սելևկոս Ա թագավորի գահակալումը համարում է միևնույն տարվա իրադարձություններ և այդ տարվանից սկսում իր ժամանակագրությունը, բայց չի նշում, թե դա որ թվականն է՝ բացարձակ ժամանակագրությամբ։ Խնդիրն այն է, որ իրականում այդ իրադարձությունները միևնույն տարվա մեջ չեն տեղի ունեցել, Ալեքսանդրը մահացել է 323 թ. մ. թ. ա., իսկ Սելևկոս Ա-ը գահակալել է 311 թ. մ. թ. ա.։ Հարցին մերձեցողի առջև երկընտրանք է ծագում, թե, այնուամենայնիվ, ո՞ր թվականն է նկատի ունեցել Խորենացին այդ միացյալ տարվա համար՝ 323-ը, թե՞ 311-ը։ Երկու իրադարձություններն էլ հույժ կարևոր են, և հնարավոր չէ նրանց պատմական ծանրակշռության աստիճանով լուծել հարցը։ Եթե 323-ը աշխարհահռչակ նվաճողի մահվան թվականն է, ապա 311-ը, Սելևկոսի գահակալման տարին, հին աշխարհում ամենատարածված էրաներից մեկի՝ սելևկյան էրայի սկզբնատարին է։

Արդ, ո՞րն ընտրել։ Սեն-Մարտենը և նրա հետևորդները ընտրում են 311-ը. Շահինյանը՝ 323-ը, ըստ որում առաջինները հենվում են հետևյալ պարագայի վրա։ 311 թվականը, սելևկյան էրայի սկզբնատարին, ունեցել է մի քանի անվանումներ։ Հատկապես՝ արևելքում, և հատկապես՝ Խորենացու ապրած ժամանակաշրջանում, այն շատ հաճախ կոչվել է «Ալեքսանդրի որդւոյ Փիլիպեայ Մակեդոնացւոյ» տարեթիվ (բերում ենք ըստ «Զգօն»-ի մեջ եղած կոնկրետ օրինակի, հակադրելով այս ձևակերպումը Լ. Շահինյանի մոտ օգտագործվող «ալեքսանդրյան» տարեթիվ հորջորջմանը, որից չի երևում, թե այդ ի՞նչ Ալեքսանդրի մասին է խոսքը, կամ միգուցե նույնիսկ Ալեքսանդրիա քաղաքի)[1]։

Ահա այս հիմքով Սեն-Մարտենը և նրա հետևորդները (այդ թվում և մենք) տեղադրում են Խորենացու համար Ալեքսանդրի մահը 311 թ.՝ Սելևկոսի գահակալմանը կից։

---

[1] 311 թ. Ալեքսանդր Մակեդոնացու անունով կոչելը, հավանաբար, ծագել է այն հանգամանքից, որ Սելևկոսը Ալեքսանդրի տերության ասիական ողջ հսկայածավալ մասի ժառանգորդը լինելով, Ալեքսանդրը ավանդաբար համարվել է նաև նրա անմիջական նախորդ։

Իսկ ի՞նչ հիմքով է Լ. Շահինյանը տեղադրում Խորենացու համար Սելևկոսի գահակալման տարեթիվը (ուրեմն և սելևկյան էրայի սկզբնատարին) 323 թ.՝ Ալեքսանդրի մահվանը կից։ Ահա այս մասին է, որ Լ. Շահինյանը լռում է։ Նա միայն համառորեն կրկնում է, թե Խորենացու ու նրա հետևորդների մոտ խոսքը Ալեքսանդրի մահվան, ուրեմն և 323 թ. մասին է։ Բայց դրան ամենն անգամ նույնքան համառորեն ու միալար կարելի է պատասխանել, թե խոսքը նրանց մոտ նաև Սելևկոսի գահակալման, ուրեմն և 311 թ. մասին է...

Երկրորդ. Լ. Շահինյանը և՛ նախորդ հոդվածներում, և՛ ներկա հոդվածում հետաքրքրական խորհրդածություններ, դիտողություններ ու պրպտումներ է անում Ասողիկի ժամանակագրական տվյալների նկատմամբ։ Բայց նա չի կարողանում ի վերջո ցույց տալ, թե ինչո՞ւ մենք պարտավոր ենք Արշակ Քաջ և Արտաշես պարթևական արքաների գահատարիների՝ Ասողիկի հաղորդած թվերը պարտագրել Խորենացու «Պատմության» տեքստին, այն պարագայում, երբ Խորենացու համապատասխան (Ասողիկի հաղորդածից տարբեր) թվերը ոչ միայն հանդես են գալիս Խորենացու «Պատմության» մեզ հասած բոլոր ձեռագրերում, այլև վկայված են բազմաթիվ միջնադարյան հեղինակների մոտ, որոնք ընդօրինակել են այդ թվերը Խորենացուց թե՛ Ասողիկից առաջ (Ուխտանես) և թե՛ Ասողիկից հետո։

Լ. Շահինյանի միտքն է, թե այդ ձևով (այսինքն՝ Ասողիկի հաղորդած թվերով Խորենացու տեքստի սրբագրմամբ) Խորենացու ժամանակագրությունը ամբողջանում է ու մոտենում ստույգ պատմական ժամանակագրությանը։ Բայց նախ դա այդպես չէ։ Դրանով, ինչպես նշել ենք նախորդ հոդվածում, կաղավաղվեին Սելևկյան թագավորների տարիները։ Իսկ երկրորդ, եթե մեկը հիրավի գայթակղվեր նման նպատակով (այսինքն՝ Խորենացու ժամանակագրությունը ստույգ պատմական ժամանակագրությանը մոտեցնելու նպատակով), ապա Ք. Պատկանյանը վաղուց արդեն առաջարկել է (և ուրիշներն էլ, օրինակ՝ Թադ. Ավդալբեգյանը, որդեգրել են այդ առաջարկը) պատմա-բանասիրական առումով անհամեմատ ավելի ընդունելի սրբագրում, որը նաև հանգեցնում է Խորենացու ժամանակագրության՝ ստույգ ժամանակագրությանը շատ ավելի մոտ ու կատարյալ պատկերի, քան Լ. Շահինյանի առաջարկածը։ Սույն հանգամանքը պարզաբանվել է մեր նախորդ հոդվածում (էջ 133—134), բայց այդ իր արձագանքը չի գտել Լ. Շահինյանի ներկա պատասխանում։

Երրորդ. Ինչպես նշվել է մեր նախորդ հոդվածում, Լ. Շահինյանը սկզբնապես փորձել էր լռության մատնել և նույնիսկ քողարկել այն հանգամանքը, որ Արշականին բնագրային 30-ի փոխարեն 50 տարի վերագրելով, հակասություն է ստեղծում իր կազմած աղյուսակի և Խորենացու տեքստի միջև։ Այժմ նա ջանում է զանազան դատողությունների ու ենթադրությունների օգնությամբ վերացնել այդ հակասությունը, որը նրան չի հաջողվում։ Պարթևաց թագավոր Արշեղի՝ իր հորը գահակից լինելու և այդ մասին Խորենացու տեղյակ լինելու, բայց լռություն պահպանելու մասին ենթադրությունը շինծու է և բրոնապրոս, մի բան, որ գիտակցում է հավանաբար և ինքը՝ Լ. Շահինյանը։

Բացի այդ, վերոհիշյալ սրբագրումը անհաղթահարելի պատվարների է հանդիպում նաև հայկական իշխողների ժամանակագրական շարքում։ Այդ մենք մանրամասն ցուցադրել ենք մեր վերը հիշատակված հոդվածի հետ գրեթե միաժամանակ լույս տեսած հատուկ հոդվածում (Ռ. Խ. Սարգսյան, Տիգրան Բ-ի և Արտավազդ Բ-ի գահատարիների քանակն ըստ Խորենացու,

«Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 12, էջ 66—72)։ Ցավոք, Լ. Շահինյանը իր ներկա հոդվածում շրջանցել է մեր այդ դրվածքը։

Բայց ամենակարևորը հետևյալն է. ընդունելով, որ տվյալ խնդրում մեր առարկությունը հիմնավոր է, Լ. Շահինյանը շեշտում է, սակայն, որ այդ հիմնավորությունը տարածվում է Խորենացու ժամանակագրության սոսկ մի առանձին, համեմատաբար փոքր հատվածի վրա, մինչդեռ ժամանակագրության ընդհանուր պատկերի վրա մեր այդ առարկությունը արդեն անհիմն է դառնում, քանի որ նրանից հետևում է, որ Խորենացին որոշ անժամանակություն (անաքրոնիզմ) է թույլ տվել հռոմեական կայսրերի շարքը իր ժամանակագրության մեջ տեղադրելու գործում։ Իսկ նման մի անժամանակության մասին մտածելը նույնիսկ «արտառոց երևույթ» է, քանի որ «Խորենացու ժամանակագրական համակարգում հռոմեական կայսրերը պետք է հանդես գան իրենց իրական, պատմական ժամանակներում, որը, փաստորեն, նրա երկից բխող պարտադիր պահանջ է» (էջ 152 — ընդգծումը հեղինակինն է)։

Ընթերցողը, ցավոք, չի զգա, թե որքան պարտավորեցնող է Լ. Շահինյանի համար այս հայտարարությունը Խորենացու համակարգում հռոմեական կայսրերի շարքի տեղադրման մեջ անժամանակության իսպառ բացակայության մասին։ Դրվատական թվալով, այն փաստորեն ծանրագույն մեղադրանք է Խորենացու հասցեին, որովհետև նրանից անխուսափելիորեն հետևում է, թե Խորենացին անտեղյակ է եղել իր իսկ ապրած V դարի ժամանակագրությանը, օրինակ, կարծել է, թե հայ Արշակունիների իշխանությունը ավարտվել է 447 թ., Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը՝ իր ուսուցիչները, մահացել են 459 թ.՝ Ավարայրից ութ տարի անց և այլն։ Ի՞նչ կասի Լ. Շահինյանն այս կապակցությամբ։ Շիտակ պատասխա՞ն կտա, թե կրկին կդիմի իր «փորձված» միջոցին, հայտարարելով, թե մենք սոսկ ջանում ենք «տպավորություն ստեղծել»։

ЕЩЕ РАЗ О ХРОНОЛОГИЧЕСКОЙ СИСТЕМЕ МОВСЕСА ХОРЕНАЦИ

Доктор историч. наук Г. Х. САРКИСЯН

(Резюме)

Новая статья Л. Шагиняна, имеющая целью преодолеть наши возражения, сделанные по поводу восстановления и в какой-то мере осмысления хронологической системы Мовсеса Хоренаци, не продвигает дела ни на шаг: все три основных вопроса, затронутые им (см. резюме его статьи), остаются по-прежнему открытыми; более того, утверждения по последнему из этих вопросов ставят его перед непреодолимыми препятствиями в историческом осмыслении хронологической системы Мовсеса Хоренаци.